

Ի՞նչ տեղեկատվություն պետք է պարունակի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստանալու դիմումը:

Կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա ստանալու դիմումում նշվում են՝

1. դիմումատուի անվանումը և գտնվելու վայրը.
2. հեռուստառադիոծրագրերի թեմատիկ ուղղվածությունը.
3. սփռման տարածքը.
4. տեղեկություններ դիմումատուի՝ այլ հեռուստառադիոընկերությունների հիմնադիր և լիցենզավորված անձ կամ զանգվածային լրատվության այլ միջոցների հիմնադիր լինելու, ինչպես նաև դրանց արտադրությամբ և տարածմամբ զբաղվելու մասին.
5. վերահեռարձակվող հեռուստառադիոծրագրերի թիվը (եթե դիմումատուն նախատեսում է իրականացնել վերահեռարձակում).
6. իր կողմից շահագործվող կաբելային (մալուխային) ցանցով այլ հեռահաղորդակցական ծառայություններ մատուցելու մասին տեղեկություններ.
7. դիմումի ներկայացման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը: